ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մայիսի 6-ին, կիրակի.—Աշխարհամատրան (Կանանչ կիրակէ).

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում և «Հայր մեր»-ից առաջ քարոզում տ. Արսեն ծ. վրդ. Բերբերյանը՝ օրվա տոնի հոգևոր և պատմական նշանակության մասին:

*
* *

Մայիսի 11-ին, ուրբաթ.—Վեհափառ Հայրապետի հրավերով ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը:

Հանուն Հայոց Հայրապետի տ. Սերովբե սրբազանին օդանավակայանում դիմավորում են՝ Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը, տ. Գրիգորիս աբղ. Բունիաթյանը և տ. Տիրան աբղ. Կյուրեղյանը:

Մայր տաճարում իր ուխտն ու աղոթքը կատարելուց հետո, տ. Սերովբե սրբազանը Վեհարանում ներկայանում է Հայոց Հայրապետին՝ Նրա օրհնությունն ստանալու համար:

*
* *

Մայիսի 13-ին, կիրակի.—Կարմիր կիրակէ.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մասիս աբղ. Գալստյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է տ. Գրիգորիս աբղ. Բունիաթյանը:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

*
* *

Մայիսի 20-ին, կիրակի.—Տօն Երևման ս. խաչի.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Աղան վրդ. Բալեոզյանը: Ս. պատարագի ավարտին քարոզում է տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը՝ օրվա տոնի պատմական և հոգևոր իմաստի մասին, ընդհանուր եկեղեցու կյանքում, որպես քրիստոնեության հաղթանակը հեթանոսության դեմ:

Այնուհետև Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվում է հոգեհանգստյան պաշտոն տ. Մաշտոց եպս. Թաջիրյանի և պրոֆ Հակոբ Սիրունու մահվան բառասունքի առթիվ:

*
* *

Մայիսի 24-ին, հինգշաբթի.—Հրաժեշտ առնելով Մայր Աթոռից և Վեհափառ Հայրապետից, այսօր իր պաշտոնատեղին է մեկնում տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը:

Գերաշնորհ սրբազանին ճանապարհում են տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը, տ. Աղան վրդ. Բալեոզյանը և տ. Նշան քհն. Բեյլերյանը:

*
* *

Մայիսի 27-ին, կիրակի.—Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

Ս. պատարագի ավարտին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ ի հիշատակ Մուսա լեռան հերոսամարտի նահատակների:

*
* *

Մայիսի 28-ին, երկուշաբթի.—Այսօր հոգեվոր ճեմարանում սկսվում են 1972—1973 ուսումնական տարվա ամավերջի քննությունները:

Ճեմարանի հանդիսասրահում առավոտյան ժամը 10-ին տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի նախագահությամբ կատարված աղոթքի մասնավոր հանդիսությունից հետո, հնչում է զանգը, և ճեմարանի հարկի տակ սկսվում են բանավոր և գրավոր ամավերջի քննությունները, որոնք կտևեն մինչև հունիսի 9-ը: